ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի հ.1499-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մաշտոցի պողոտային հարող տարածքում գտնվող «Կապույտ մզկիթ»-ի զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 8414.55 քմ մակերեսով հողամասից Երևան համայնքի սեփականություն հանդիսացող 588.75 քմ մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Մաշտոցի պողոտային հարող տարածքում գտնվող 588.75 քմ մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի հ.1499-Ա որոշմամբ նախատեսվել է Մաշտոցի պողոտային հարող տարածքում «Կապույտ մզկիթ» («Գյոյ» մզկիթ) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանն իր սպասարկման համար անհրաժեշտ հողամասով 99 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետությանը:

Մաշտոցի պողոտային հարող տարածքում «Կապույտ մզկիթ» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի փաստացի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 8414.55 քմ մակերեսով հողամասից 588.75 քմ մակերեսով հողամասը ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի հ.1517-Ն որոշմամբ Երևան համայնքին փոխանցված հողերի ցանկում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի հ.1499-Ա որոշմամբ Մաշտոցի պողոտային հարող տարածքում «Կապույտ մզկիթ» («Գյոյ» մզկիթ) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանն իր սպասարկման համար անհրաժեշտ հողամասով համարվել է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և դրա տնօրինման լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանը: Նույն որոշման 2-րդ կետով առաջարկվել է հուշարձանի զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմաններում ընդգրկված և Երևանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

Ներկայումս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի հ.1499-Ա որոշման կատարումն ապահովելու, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով «Կապույտ մզկիթ» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի տարածքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը ձևակերպելու և անհատույց օգտագործման իրավունքով Իրանի Իսլամական Հանրապետությանը փոխանցելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել քննարկվող 588.75 քմ մակերեսով հողամասը փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամաս նվիրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ